THE GLOBAL COMPACT

WE SUPPORT

CONTOURGLOBAL®

ContourGlobal

# Մատակարարի վարվեցողության կանոնագիրք






# ContourGlobal-ի հանձնառությունը

*ContourGlobal-ն էլեկտրաէներգիա է արտադրում աշխարհի շատ երկրներում, և այդ բոլոր երկրներում մենք աշխատում ենք էթիկայի ամենաբարձր չափանիշներին համապատասխան: Մենք գործում ենք Միացյալ ազգերի կազմակերպության համընդհանուր պայմանագրի սկզբունքներին համապատասխան, և մեր գնումների քաղաքականության պահանջն է, որ մեր մատակարարները նույնպես ստանձնեն մեր՝ այս սկզբունքների հանդեպ ունեցած հանձնառությունը: Մեր Մատակարարի Վարվեցողության կանոնագիրքը («Մատակարարի Կանոնագիրք») հիմնված է ContourGlobal-ի Վարվեցողության կանոնագրքի ու Բիզնես էթիկայի, ինչպես նաև ContourGlobal-ի հակակոռուպցիոն համապատասխանության ուղեցույցների վրա: «Մատակարարի կանոնագիրքը» մատակարարների հետ կնքված մեր պայմանագրերի մաս է կազմում, և մեր մատակարարները պարտավոր են ապահովել բոլոր ենթակապալառուների համապատասխանությունը «Մատակարարների կանոնագրքի» դրույթներին:*

# Մատակարարի վարվեցողության կանոնագիրք

## ԷԹԻԿԱ ԵՎ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆ

**Կաշառակերություն և կոռուպցիա.** Մատակարարները պետք է գործեն կաշառակերության դեմ պայքարի համար կիրառվող բոլոր օրենքների և ContourGlobal-ի հակակոռուպցիոն կանոնակարգերի համապատասխան: Մատակարարները չպետք է ContourGlobal-ի աշխատակիցներին, պետական պաշտոնյաներին կամ որևէ այլ անձի, ով մատակարարի բիզնեսի առնչությամբ կապված է ContourGlobal-ի հետ, ներգրավվեն կաշառակերության որևէ տեսակի մեջ, կամ որևէ անպատշաճ խրախուսական վճարումներ առաջարկեն, ներառյալ դրամ կամ որևէ արժեքավոր իր, ContourGlobal-ի հետ գործնական հարաբերություններ հաստատելու կամ այն պահպանելու նպատակով:

**Նվերներ և հյուրասիրություն.** Կաշառակերությունը և կոռուպցիան ներառում են հյուրասիրություն, կացարանի, ճանապարհորդության, սննդի հետ կապված ծախսերի հոգում կամ նվերների տրամադրում կոռուպցիոն նպատակներով կամ այնպիսի հանգամանքների ներքո, որտեղ հնարավոր է նշմարել կաշառք տալու նպատակ: Մատակարարները չեն կարող որևէ կորպորատիվ հյուրասիրություն կամ արժեքավոր իր առաջարկել պետական որևէ պաշտոնյայի կամ աշխատակցի` որևէ պաշտոնական գործողության վրա ազդելու նպատակով, այն է կաշառքի մտադրություն, որն առնչվում է մատակարարի և ContourGlobal-ի միջև գործնական հարաբերություններին: Նվերը, ճանապարհորդությունը, կացարանի տրամադրումը, ճաշը, հյուրասիրությունը, ժամանցը կամ բնակեցումը պետք է համապատասխանեն ContourGlobal-ի հակակոռուպցիոն ուղեցույցների և Վարվեցողության կանոնագրքի ու Բիզնես էթիկայի պահանջներին:

# ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔ

**Երեխաների աշխատանք.** Մատակարարները պետք է համապատասխանեն երեխաների աշխատանքին վերաբերող բոլոր կիրառելի օրենքներին և աշխատանքի ընդունեն միայն այն աշխատակիցներին, ովքեր բավարարում են երկրում գործող օրենքով սահմանվող նվազագույն տարիքային պահանջը:

**Բռնի և հարկադիր աշխատանք.** Մատակարարները չպետք է կիրառեն բռնի և հարկադիր աշխատանք, ներառյալ սերվիտուտային պայմանագրով իրականացվող կամ ստրկական աշխատանքը:

**Աշխատավարձեր և աշխատանքային ժամեր.** Մատակարարները պետք է գործեն աշխատանքային ժամերին վերաբերող բոլոր կիրառելի օրենքներին համապատասխան և տրամադրեն հավելավճար օրենքով պահանջվող դեպքերում: Բացի այդ, մատակարարները պետք է գործեն աշխատավարձերին և նպաստներին վերաբերող բոլոր կիրառելի օրենքներին համապատասխան:

**Միավորում կազմելու և կոլեկտիվ բանակցություն վարելու ազատություն.** Մատակարարները պետք է հարգեն աշխատակիցների` միավորումներում հանդես գալու ազատության օրինական իրավունքը, ինչպես նաև նրանց` աշխատավորական միությանը միանալու, կազմելու կամ դրան չմիանալու կամ այլ կերպ կոլեկտիվ բանակցություններում ներգրավվելու օրինական իրավունքը:

**Խտրականություն և ճնշում.** Մատակարարները չպետք է խտրականություն դնեն աշխատանքային որևէ պայմանի առումով` հիմնվելով աշխատանքի կատարման հետ չառնչվող ռասայի, գույնի, ազգային պատկանելության, սեռի, կրոնի, տարիքային հաշմանդամության, ՄԻԱՎ/ՁԻԱՀ կարգավիճակի, առևտրային միավորման անդամության, սեռական կողմնորոշման կամ որևէ այլ առանձնահատկության վրա, և պետք է համապատասխանեն աշխատանքում խտրականությանն առնչվող բոլոր կիրառելի օրենքների հետ: Բացի այդ, մատակարարները պետք է հետևեն և կիրառեն այն կանոնակարգերը, որոնք դեմ են այս հիմքով իրականացվող ճնշմանը:

# ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ, ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐ

**Հարգել շրջակա միջավայրը.** Մատակարարները պետք է գործեն համաձայն բնապահպանական բոլոր կիրառելի օրենքներին և ContourGlobal-ի բնապահպանական քաղաքականությանը և ներդնեն շրջակա միջավայրի վրա ունեցած ազդեցությունների կառավարման համակարգեր:

**Պաշտպանել առողջությունը և անվտանգությունը.** Մատակարարները պետք է ապահովեն անվտանգ և առողջ աշխատանքային միջավայր իրենց աշխատակիցների համար և գործեն համաձայն առողջությանն ու անվտանգությանը վերաբերող բոլոր կիրառելի օրենքներին, ինչպես նաև ContourGlobal-ի` առողջությանն ու անվտանգությանը վերաբերող կանոնակարգերին:

# ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆ

**Համապատասխանություն.** Մատակարարները պետք է գործեն ContourGlobal-ին ապրանքների և ծառայությունների տրամադրմանն առնչվող բոլոր կիրառելի օրենքներին համաձայն, որոնք ներառում, սակայն չեն սահմանափակվում այն օրենքներով, որոնք նախատեսված են կաշառակերությունը, շորթումը, անարդար առևտուրը և փողերի լվացումը կանխելու համար: Բացի այդ, ակնկալվում է, որ մատակարարները կներդնեն և կսպասարկեն համապատասխան համակարգեր և վերահսկման մեխանիզմներ, որոնք բավարար կլինեն Մատակարարի` տվյալ կանոնագրքի կիրառելի օրենքներին և սկզբունքներին համապատասխանությունը խթանելու համար, ներառյալ կանոնակարգերը, վերապատրաստումը, մոնիթորինգը և աուդիտը:

**Շահերի բախում.** Մատակարարները պետք է խուսափեն ContourGlobal-ի աշխատակիցների հետ այնպիսի շփում ունենալուց, որը կարող է հակասել, կամ թվա, որ կարող է հակասել տվյալ աշխատակցի անկախ կարծիքի հետ, ինչը լավագույնս բխում է ContourGlobal-ի շահերից: Սա ներառում է ContourGlobal-ի աշխատակիցներին վճարումներ, նվերներ, զվարճանք կամ այլ արժեքավոր իրեր (ներառյալ աշխատանքային հնարավորությունները) առաջարկելը, երբ այս կերպ վարվելը կարող է, կամ թվում է, որ կարող է խանգարել տվյալ աշխատակցի` ContourGlobal-ի հանդեպ ունեցած հավատարմության պատասխանատվությանը կամ այլ պարտավորություններին:

**Արդար մրցակցություն.** Մատակարարները պետք է գործեն համաձայն արդար մրցակցության և հակամենաշնորհային օրենքների:

**Ճշգրիտ հաշվապահական և բիզնես հաշվառում.** Մատակարարները պետք է վարեն ճշգրիտ հաշվառում այն բոլոր գործերի համար, որոնք առնչվում են մատակարարի` ContourGlobal-ի հետ ունեցած բիզնեսի, ինչպես նաև ContourGlobal-ի հետ ունեցած բիզնեսի հետ առնչվող որևէ ենթակապալառուի հետ և պահանջի դեպքում դրանք տրամադրեն:

**Տեղեկատվության գաղտնիություն.** Մատակարարները կարող են օգտվել ContourGlobal-ի գաղտնի տեղեկատվությունից միայն համաձայնեցված նպատակների և իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելու համար: Մատակարարները պետք է պաշտպանեն ContourGlobal-ի գաղտնի տեղեկատվությունը և կանխեն դրա սխալ օգտագործումը, գողությունը, մեքենայությունը կամ անտեղի հրապարակումը: Մատակարարները նաև պետք է պաշտպանեն այն նրբանկատ կամ գաղտնի տեղեկատվությունը, որն առնչվում է ContourGlobal-ի հետ և որը կարող է ազդել ContourGlobal-ի կամ նրա աշխատակիցների վրա:

Այն դեպքում, եթե մատակարարը խախտի ContourGlobal-ի` Մատակարարի Վարվեցողության կանոնագիրքի պահանջները, ապա ContourGlobal-ը մատակարարից կպահանջի, որ վերջինս իրականացնի ուղղիչ աշխատանքային ծրագիր` սահմանված ժամանակահատվածում անհամապատասխանությունը վերացնելու նպատակով: Այն դեպքում, եթե մատակարարը սահմանված ժամանակահատվածում չի վերացնում խախտումը, ContourGlobal-ը իրավասու է դադարեցնելու վերջինիս հետ գործնական հարաբերությունները: